CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն

Ապրիլի 10, 2024

ՔՈԱՖ-ը հայտարարում է Դեբեդի միջնակարգ դպրոցի շինարարական աշխատանքների մեկնարկը

ԼՈՌԻ — Ապրիլի 10-ին Լոռու մարզի Դեբետ գյուղում տեղի ունեցավ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (ՔՈԱՖ) կողմից կառուցվող դպրոցի հիմնարկեքի արարողությունը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, Լոռու մարզպետ Արամ Ղազարյանը, Փամբակ խոշորացված համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը, կառավարության և համայնքի այլ ներկայացուցիչներ, ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը:

Դպրոցի կառուցումն իրագործվում է հիմնադրամի գյուղական համայնքների համապարփակ զարգացման ծրագրերի շրջանակներում՝ հնարավորություն ընձեռելով հարյուրավոր երեխաների և երիտասարդների ունենալու 21-րդ դարին համահունչ որակյալ կրթություն և ուսումնառության համար լավագույն պայմաններ:

Դեբետում միջնակարգ նոր դպրոցի կառուցման հանձնառությունը հիմնադրամը ստանձնել է հաշվի առնելով նախկինում գործող շենքի անբարեկարգ վիճակը: Նոր դպրոցը, որի կառուցման համար ՔՈԱՖ-ը ներդնելու է ավելի քան 1,7 մլն ԱՄՆ դոլար, ներառում է ժամանակակից դպրոցական համալիր՝ լուսավոր և գունեղ դասասենյակներով, մասնագիտացված լաբորատորիաներով և ինտերակտիվ ու ժամանակակից այլ սենյակներով, որոնք նախատեսված են ոչ միայն գիտելիքների յուրացումը դյուրին դարձնելու, այլև երեխաների ակտիվ ներգրավվածությունը խրախուսելու համար:

ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը բացման խոսքում նշեց. «ՔՈԱՖ-ը Լոռվա մարզում իրականացվող տարբեր ծրագրերի և շինարարական նախագծերին զուգահեռ այսօր մեկնարկեց Դեբեդի դպրոցի կառուցման աշխատանքները: Մեր նպատակն է հնարավորինս աջակցել որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծմանը: Ուզում եմ հատուկ նշել, որ ինչպես

մեր մնացած նախագծերն, այնպես էլ Դեբեդի դպրոցի կառուցումը ընթանում է անձնակազմի շարունակական վերապատրաստումներին զուգահեռ: Մենք կառուցում ենք ոչ միայն դպրոցի շենք, այլև փորձում ենք ստեղծել միջավայր, որտեղ երեխաները և ուսուցիչները կկարողանա բացահայտել և իրացնել իր ողջ ներուժը, աշխատել և սովորել ստեղծագործականությունը խթանող միջավայրում, ձևավորել լայն մտահորիզոն»:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը. «Կրթական համակարգում ներկայումս բավականին ծավալուն բարեփոխումների մի ժամանակաշրջան է: Այս համատեքստում իրականացվող ամենակարևոր ծրագրերից մեկը Կառավարության *«300* դպրոց և *500* մանկապարտեզ»-ն է և կարծում եմ՝ այս դպրոցի շինարարությունը գալիս է համալրելու նշված ծրագիրը: Բնականաբար, սա իրականացնելու հնարավորություն չէր լինի, եթե «Հայաաստանի մանուկներ» հիմնադրամն ակտիվորեն չաշխատեր բարերարների հետ: Մեր մեծ շնորհակալությունը հիմնադրամին և բոլոր այն մարդկանց, ովքեր իրենց ներդրումն են ուզում ունենալ մեր երկրում, մասնավորապես դպրոցաշինության և կրթության ոլորտում փոփոխություններին ուղղված ծրագրերում»:

Լոռու մարզպետ Արամ Ղազարյանն ընդգծեց Դեբետ գյուղում նոր որակի ուսումնական հաստատություն հիմնելու կարևորությունը՝ նշելով. «Իզուր չէ ասված, որ պետության զարգացման կարևոր նախապայմաններից մեկը լավագույն կրթության ապահովումն է, իսկ դրա համար կարևոր է նաև կրթական բարենպաստ միջավայրի ստեղծումը: Այս կապակցությամբ շնորհավորում եմ Լոռու մարզի, մասնավորապես Դեբետի բնակիչներին ժամանակակից դպրոցի շինարարության մեկնարկի կապակցությամբ: Կարճ ժամանակ հետո ՔՈԱՖ-ի շնորհիվ ունենալու ենք նորարարական և առաջադեմ կրթական մի կառույց, որը կօգնի յուրաքանչյուր աշակերտի ստեղծարար միջավայրում բացահայտել իր ներուժը, զարգացնել կարողությունները՝ ստանալով որակյալ կրթություն»:

ՔՈԱՖ-ի մասին ավելին իմանալու և հիմնադրամի առաքելությանն աջակցելու համար այցելեք coaf.org կայք:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի ու կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը *2004*թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ *82+* համայնքներում՝ ներդնելով ավելի քան *70* մլն ԱՄՆ դոլար՝ *100,000*-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

ՔՈԱՖ-ի հաղորդակցության բաժնի ղեկավար
Նանա Մարդոյան
Էլ. հասցե՝ nana.mardoyan@coaf.org
Բջջ.՝ +374 55 003 723